ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

---

# ՈՐՈՇՈՒՄ

12 փետրվարի 2016 թվականի **թիվ 9** քաղ. Մոսկվա

**Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 130 որոշման 7.1.14 ենթակետում փոփոխություն կատարելու մասին**

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի 43-րդ եւ 45-րդ հոդվածներին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 7-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Մաքսային միության միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 130 որոշման 7.1.14 ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«7.1.14. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 5 եւ 8802 40 003 6 ստորաենթադիրքերում ընդգրկված քաղաքացիական ուղեւորատար ինքնաթիռները, որոնք Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք են ներմուծվել սույն Որոշման 7.1.13 ենթակետում նշված արտոնության կիրառմամբ, եւ որոնք Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք են ներմուծվում դրանց շահագործման ժամկետի ընթացքում՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս դրանց վերանորոգումից կամ տեխնիկական սպասարկումից հետո.»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո եւ տարածվում է «Քաղաքացիական ուղեւորատար ինքնաթիռների առանձին տեսակների առնչությամբ Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 130 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 89 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ծագած իրավահարաբերությունների վրա:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

| Հայաստանի Հանրապետությունից՝ | Բելառուսի Հանրապետությունից՝ | Ղազախստանի Հանրապետությունից՝ | Ղրղզստանի Հանրապետությունից՝ | Ռուսաստանի Դաշնությունից՝ |
|---|---|---|---|---|
| Վ. Գաբրիելյան | Վ. Մատյուշեւսկի | Բ. Սագինտաեւ | Օ. Պանկրատով | Ի. Շուվալով |